Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) 2019-2022թթ.

Ծրագիր՝ Դատական բարեփոխումների իրականացում

1-ին բաղադրիչ՝ Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդում

Ո՞րն է ծրագրի նպատակը

- Ամրապնդել Հայաստանում դատական իշխանության անկախությունը, իրավական ընթացակարգերի արդյունավետությունը և արդարադատության մատչելիությունը :

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- Լայն հասարակությունը, ներառյալ դատարաններում իրենց իրավունքների պաշտպանությանը ձգտող անձինք:
- Դատավորները, դատական ինքնակառավարման մարմինները, իրավաբանները, ՀՀ խորհրդարանի անդամները, որոնք կկարողանան կիրառել իրավական բարելավված ակտերն իրենց առօրյա աշխատանքում:
- Արդարադատության ոլորտում քաղաքականություն մշակողները և որոշում կայացնողները:
- Հաշտարարները և արբիտրները:
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- Երկրում արդարադատության բարեփոխումներից բխող կարիքների բավարարման համար մշակված մոտեցումների կիրառմամբ:
- Դատական բարեփոխումներին դատական ակտերի մշակմանն ուղղված աաջակցության միջոցով:
- Եվրոպայի խորհրդի չափանիշներին և առաջարկություններին համապատասխան հաշտարարության և

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- Դատական իշխանությանն առնչվող ներպետական իրավական ակտերը կմշակվեն և կիրականացվեն Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն:
- Ծրագրի աջակցության շնորհիվ կամրապնդվի դատավորների ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ նորաստեղծ Բարձրագույն դատական խորհրդի և Դատավորների ընդհանուր ժողովի թափանցիկ և արդյունավետ աշխատանքը:

http://partnership-governance2-eu.coe.int

արբիտրաժի կիրառման ամրապնդման միջոցով:

- Ներպետական գործընկերների հետ սերտ համագործակցությամբ և հիմնական ներպետական գործընկերների ու քաղաքացիական հասարակության ներգրավմամբ, ինչպես նաև տարբեր շահակիր կողմերի ընդգրկմամբ՝ ուղղված ծրագրում տեղական մասնակցության ամրապնդմանը:
- Երկկողմանի հանդիպումների, ինչպես նաև փորձի բազմակողմանի փոխանակման միջոցով:
- Օրենսդրության վերաբերյալ խորհրդատվության և փորձաքննության, վերլուծությունների և բովանդակային առաջարկությունների միջոցով:
- Ծրագիրը հիմնված է արդարադատության ոլորտում համագործակցության ԳԼԿ 1-ին փուլի (2015-2018թթ.) շրջանակներում արձանագրված արդյունքների վրա:
- Կամրապնդվեն դատարաններից օգտվելու հավասար հնարավորությունները և իրավական որոշակիությունը, ինչպես նաև կբարձրացվի դատարանների կառավարման և աշխատանքի իրականացման արդյունավետությունը :
- Հայաստանում կբարելավվի արբիտրաժի և հաշտարարության գործնական կիրառությունը
- Հասարակության համար դատարաններից օգտվելու գործընթացը կհեշտացվի, ինչպես նաև դատական գործերի կուտակումը կնվազեցվի:

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- Բաղադրիչ 1-ի ընդհանուր բյուջեն կազմում է 915 000 եվրո
- Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից: Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը:

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- Ծրագրի տևողությունն է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը:

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- Արդարադատության ու իրավական համագործակցության չափանիշներ, Արդարադատության ոլորտի բարեփոխումների բաժին, Մարդու իրավունքների իրականացման վարչություն, Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն

Կոնտակտային տվյալներ

<u>Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝</u>

- Լիլյա Գրետասդոտտիր, Համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավար, lilja.gretarsdottir@coe.int
- Լիլիթ Դանեղյան-Բոսլե, Համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ, lilit.daneghian-bossler@coe.int

- Մարիանա Չիկու, ստորաբաժնի ղեկավար, mariana.chicu@coe.int
- Անդրեյ Կավակին, Ծրագրի համակարգող, andrii.kavakin@coe.int

Ծրագրի թիմը Երևանում՝

- Թամարա Բարբակաձե, Ծրագրի ղեկավար, tamara.barbakadze@coe.int
- Նատալյա Ադամյան, Ծրագրի պատասխանատու, natalya.adamyan@coe.int

Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) 2019-2022 թթ.

Ծրագիր՝ Դատական բարեփոխումների իրականացում

2-րդ բաղադրիչ՝ Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում

Ո՞րն է ծրագրի նպատակը

- Ծրագրի նպատակն է աջակցել քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներին՝ օրենսդրական, մեթոդաբանական և կարողությունների զարգացմանը միտված օժանդակություն ցուցաբերելով

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- Լայն հասարակությունը
- Քաղաքացիական հասարակությունը Գործընկեր կառույցները և դրանց աշխատակիցները
- ՀՀ Արդարադատության նախարարությունը
- Արդարադատության ակադեմիան
- Դատական համակարգը
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչը
- ՀՀ Ազգային ժողովը
- ՀՀ Գլխավոր դատախազությունը
- ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը
- ՀՀ Քննչական կոմիտեն
- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- Ծրագրի կողմից տրամադրվում է փորձագիտական աջակցութուն իրավական ոլորտի հիմնական շահակիցների կողմից քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի, ինչպես նաև իրավական շրջանակի ձևավորման և կիրառման գործընթացի ընթացքում
- Ծրագիրը նպաստում է Արդարադատության ակադեմիայի

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- Քրեական արդարադատության ոլորտում ներպետական քաղաքականությունը և պրակտիկան առավել համապատասխանեցվում են Եվրոպական չափանիշներին
- Խթանվում է ներպետական դատական պրակտիկայի ներդաշնակեցումը ՄԻԵԴ նախադեպային իրավունքին
- Ամրապնդվում են Արդարադատության ակադեմիայի կարողությունները՝ քրեական արդարադատության և մարդու իրավունքների ոլորտում դատավորներին վերապատրաստելու համար

կարողությունների զարգացմանը՝ դատավորներին և իրավական ոլորտի մասնագետներին վերապատրաստելու համար:

- Ծրագրի իրականացումը հիմնված է կոնկրետ մշակված այնպիսի միջոցառումների վրա, ինչպիսիք են՝ փորձագիտական կարծիքների, համեմատական ուսումնասիրությունների և վերլուծությունների տրամադրում, մեթոդաբանությունների մշակում և կիրառման խթանում, քրեական արդարադատության ոլորտի շահակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունների զարգացում
- Վերապատրաստման միջոցառումները իրականացվում են Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության HELP ծրագրի (www.coe.int/help) հետ սերտ համագործակցությամբ
- Ծրագիրն հիմնված է ԳԼԿ 1-ին փուլի (2015-2018թթ.) շրջանակներում արձանագրված արդարադատության ոլորտում համագործակցության արդյունքների վրա

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- Բաղադրիչ 2-ի ընդհանուր բյուջեն կազմում է 875 000 եվրո:
- Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից: Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- Ծրագրի տևողությունն է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- Արդարադատության ու իրավական համագործակցության չափանիշներ, Արդարադատության ոլորտի բարեփոխումների բաժին, Մարդու իրավունքների իրականացման վարչություն, Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն, Եվրոպայի խորհուրդ

Կոնտակտային տվյալներ

Ծրագրի թիմը Ստրասբուրգում

- Լիլյա Գրետասդոտտիր, Համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավար, lilja.gretarsdottir@coe.int
- Լիլիթ Դանեղյան-Բոսլե, Համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ, lilit.daneghian-bossler@coe.int
- Մարիանա Չիկու, Ստորաբաժանման ղեկավար mariana.chicu@coe.int
- Բոժենա Մալանչուկ, Ծրագրի համակարգող bozhena.malanchuk@coe.int

Ծրագրի թիմը Երևանում

- Գայանե Հովհաննիսյան, Ծրագրի ղեկավար gayane.hovhannisyan@coe.int

Սույն ծրագիրը հանդիսանում է երկկողմանի ծրագիր Հայաստանի հետ, որն իրականացվում է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում (2-րդ փուլ կամ ԳԼԿ II)։

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում։ Ծրագրի 1-ին փուլը (ԳԼԿ I) մեկնարկել է 2015 թվականին և ավարտվել 2018 թվականին։ Ծրագրի երկրորդ փուլը (ԳԼԿ II) մեկնարկել է 2019 թվականին և կտևի մինչև 2022 թվականը։

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելուն միտված ներպետական բարեփոխումներ իրականացնելու նպատակով։